

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
 «www.antitrafficking.am ԿԱՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
 ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը	«Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ
Գտնվելու վայրը	ք. Երևան
Ծրագրի անվանումը	« www.antitrafficking.am կայքի պահպանում և թարմացում»

Ծրագրի համառոտ բովանդակությունը.

Ծրագրի նպատակն է՝ www.antitrafficking.am կայքի պահպանման և թարմացման միջոցով բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը մարդկանց թրաֆիքինգի խնդիրների շուրջ: Ծրագրի իրականացման համար նախատեսված են հետևյալ աշխատանքները՝ մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ նորությունների և նախատեսված բաժինների վերաբերյալ նյութերի հավաքում, թարգմանում և տեղադրում www.antitrafficking.am կայքում, www.antitrafficking.am կայքի այցելությունների ամսական հաշվետվությունների ուսումնասիրում և համապատասխան միջոցառումների ձեռնարկում, բաժանորդների քանակի ավելացում, սոցիալական ցանցերում www.antitrafficking.am կայքի նյութերի հղումների (լինկ) տեղադրում: